Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 1262. Քաղաքացու անձնական օրենքը

1. Քաղաքացու անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որի քաղաքացիությունն ունի տվյալ անձը: Եթե անձն ունի երկու կամ ավելի այլ պետությունների ~~պետության~~ քաղաքացիություն, ապա նրա անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որի հետ այդ անձն առավել սերտ է կապված:

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացու անձնական օրենքը Հայաստանի Հանրապետության իրավունքն է:

2. Քաղաքացիություն չունեցող անձի անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որտեղ տվյալ անձը մշտապես բնակվում է:

3. Փախստականի անձնական օրենքը նրան ապաստան տրամադրած պետության իրավունքն է:

Հոդված 1268. Խնամակալությունը և հոգաբարձությունը որոշող օրենքը և կիրառվող իրավունքը

1. Անչափահասների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ չափահաս անձանց նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանվում և վերացվում է այն անձի անձնական օրենքով, որի նկատմամբ~~կիրառմամբ~~ սահմանվել կամ վերացվել է խնամակալությունը կամ հոգաբարձությունը:

2. Խնամակալություն (հոգաբարձություն) ստանձնելու խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունը որոշվում է խնամակալ (հոգաբարձու) նշանակված անձի անձնական օրենքով:

3. Խնամակալի (հոգաբարձուի) և խնամակալության (հոգաբարձության) ներքո գտնվող անձի միջև հարաբերությունները կարգավորվում են այն պետության իրավունքով, որի մարմինը նշանակել է խնամակալ (հոգաբարձու): Սակայն, եթե խնամակալության (հոգաբարձության) ներքո գտնվող անձը բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, ապա կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը, եթե այն առավել բարենպաստ է տվյալ անձի համար:

4. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ սահմանված խնամակալությունը (հոգաբարձությունը) Հայաստանի Հանրապետությունում համարվում է վավեր, եթե դրա դեմ օրենքի վրա հիմնված առարկություններ չունի Հայաստանի Հանրապետության համապատասխան հյուպատոսական հաստատությունը: